

ւեր մեծ եկեղեցի, և ճոխ հանգստարան և մի քա-
րեայ բարձր խաչ, որի երկարութիւնն աւելի է 3
մետրից, Կարմիր վանք, որ բարձր է փոքր ինչ աւերա-
կիցս, և որ փոքր եկեղեցի է առանց կաթուղիկէի,
բայց իւր մօտ կայ հանգստարանս: Ամէն մի ըն-
թերցող սոյն նկարագիրը կարդալով կարող է եղրա-
կացնել, որ Արցախի հեղինակն անշուշտ այցելել է
և իւր իսկ աչքովը տեսել է նկարագրած քարեայ
բարձր խաչը, 3 մետր բարձրութեամբ, Կարմիր
վանքը առանց կաթուղիկէի ելն ելն:

Եթէ Արցախի հեղինակը Ստրառնի նման
տեսածը իրրեւ տեսած նկարագրէր, լսածը՝ լսած,
այն ժամանակ այսպիսի սխալների մէջ չէր ընկնի:
Սարգիս Եպիսկոպոս Զալալեանի նման:

Արդէս մի առձեռն ապացոյց առաջ երբում
յիշեալ Աղաճասի Էրկան (Էրկար կամ բարձր)
խաչի նկարագիրը, բարձրութիւն 4 արշ. 5 վերշ.
լայնութիւն մի արշ. 4 վերշ. թանձրութիւն
3 վերշ. Կրաքարից և հիանալի քանդակներով խաչ
քար է: Աւերակ կողմը կաթուղիկէաձև, ներքեւինը
սեպաձև:

Խաչարձանիս արձանագրութիւնն է 11 տող
միջակ երկաթագիր որ է այսպէս՝

«Թիւն ՈԿԵ (665 = 1216) Ես Սակո որդի
Ասիտանգա կանգնեցի զխաչ բարեխաւս առ Աստ-
ուած հոգո իմն եւ ետու զիշեկրա այգին իւր
հոգով եւ վատապանաւ եւ եզնանտին երկիրն ի
սուրբ Գրիգոր Բերդաձորա եւ զբախերին մա-
տաղիսն, եւ զճաքեցանց երկիրն եւ Ա. Զաղաց
ի ժամատունն քն հոգո փրկութիւն ամուսնո իմո ի
հայրապետութեանն տէր Յոհաննիսի ով զայս խա-
փանէ եւ ընդաձորա սահման կամ ի վիճակն
ձեռն արկանէ կամ զրկէ ՅԺԸ (318) հայրապետացն
նշոված եղիցի ամէն»:

Սոյն արձանագրութիւնից հասկանալի է որ
Բերդաձորայ սուրբ Գրիգոր ուխտը—վանքը հեռու
չէ խաչարձանիցս, ուրեմն խաչարձանի շրջակայ-
քում պիտի որոնենք արձանագրութեան յիշատա-
կուած վայրերը, Բերդաձորայ սուրբ Գրիգորայ
ուխտ կամ Կարմիր վանքը գտնուում է Խոխիկայ
բերդի (թերեւ Խոխանաբերդ) հանգէպ, հին Աա-
ղաճասից բարձր գէպ արեւմուտք, Լարան կոչուած
ձորում, հին Աղաճասից 10 վերստ հեռւորու-
թեամբ:


Աւանքը նման է մի փոքրիկ օրօրոցաձև եկե-
ղեցու, ունի թաղակապ դաւիթ, եկեղեցու կամ
վանքի երկարութիւնը մէջէմէջ 8 արշ. 10 վերշ.
լայնութիւնը 4 արշ. 12 վերշ. ունի երկու դուռն
մին հարաւից, միւսը արեւմտից, մի լուսամուտ ա-

րեւելքից, սեղանում 2 խորհրդարան, դաւիթ մե-
ծութիւնը՝ երկարութիւնը 3 սաժէն, լայնութիւնը
4 արշ. 10 վերշ. հիւսիսային պատում՝ երկու խո-
րան, որմերը կամարակապ թաղերի վրայ է կանգնած:
Արմերի հաստութիւնը 15 վերշ. հարաւային կող-
մում մի փոքրիկ մատուռ: Աւանքի շուրջը աւերակ
կացարանների փլատակներով ծածկուած է:

Աւանքի արտաքին արձանագրութիւններն են.

Հիւսիսային պատի զրոյի գերն է՝ 15 տող ար-
ձանագրութիւն միջակ երկաթագիր, արձանագրի
մեծութիւնը 12 × 18 վերշոյ, որ է այսպէս. —
«ՈՒԸ (678 = 1229) ԹՎ. ես Տիրածայրս Ապարանից
բարեպաշտ Արքային Զալալին իմ ընչիւք գնեցի
զԳոխին երկիրն եւ ետու ի սուրբ ուխտս Բերդա-
ձորայ եւ սպասաւորք սորա ետուն ի տարին Գ. աւր
պատարագք ուխտան Աստուածածնին մինչի գալուստ
Տեառն անխափան կատարել վասն փրկութեան հո-
գոյ իմոյ արդ որ զժամ խափանէ իմ յանցանացն
տէր է առաջի Քրիստոսի»: Սոյն վանքի մնացեալ
բաղմաթիւ արձանագրութիւնները թողնելով ուրիշ
առթի յոյս ունենք, որ տակաւին պատեհու-
թիւն կ'ունենանք «Արցախի» բովանդակութեանը
դառնալու:

ԴՍ. Վ.



ԲԸՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԳԱՍԱՒԱՆԳՈՒԹԻԻՆԸ

ՓՐԱՆՍԻԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ.

Արօնի դատաւանդումը դպրոցներից բառ-
նալուց յետոյ, Պրանսիայում դրա փոխարէն
սահմանեցին «բարոյագիտութեան» դասեր, որ
իրրեւ թէ պիտի կրօնի տեղը բռնէր: Թէ
գործնական ինչ հետեւեց ունեցաւ այդ
քայլը, ամենագեղեցիկ կերպիւ երևում է այդ
այսօրուան Պրանսիական ընկած կիսնքից:
Թէ ինչպէս են հասկանում Պրանսիայից
«պարտաւորութեան», «հայրենասիրութեան»,
և այլ վերացական գաղափարները, պարզ ե-

րեում է այն սոսկալի կաշառարեկութեան դատերից, որ ամենայն օր երեւան են գալիս: Մանկավարժական տեսակէտից հետաքրքրական է այդ առարկայի աւանդման եղանակը, որի մասին մի անգամ էլ խօսել ենք «Արարատում»: Այժմ կամենում ենք մի ամփոփ տեսութիւն տալ «բարոյագիտութեան» դաստառութեան ներկայ ընթացքի մասին:

Յաճախ ֆրանսիական ուսուցիչներին և ուսուցչուհիներին կրկնում են. «Չեզնից չի պահանջուում բարոյականութիւն ուսուցանել ի բարձուստ, ջանացէք աւելի սանիկների սիրտը շարժել քան սովորեցնել, աւելի օրինակով քարոզել քան բանաձևով, աւելի սրտի հետ խօսել՝ քան մտքի. եղէք պարզ և մատչելի, որքան կարելի է նուազ վերացական և նուազ վարդապետող, մեկնեցէք առանց քարոզելու և աւելի զրոյցներով ներգործեցէք քան դասերով: Միթէ այս խօսքերը կրկնելով չեն զրգում նրանց՝ ուսուցման այս ճիւղի մէջ քչով, մինչև իսկ չափազանց քչով բաւականանալու:

Հատերը կանխատեսելով վտանգն և զգալով՝ որ շատ ուսուցիչներ այդ առարկան հարեւանցի են անցնում, յայտնի շարժում յառաջ բերին, բայց ամէնքն էլ միևնոյն ուղիով ընթացան:

Բոսնիան անգամ Հարլ Վիպլիւյին, նախկին նախարարապետը, խնդիր յարոյց թէ ի՞նչ միջոցներով պէտք է արմատացնել այն տեղեկութիւններն ու բարոյական տպաւորութիւններն, որ երեխան դպրոցում ձեռք է բերում և որ նախ քան չափահաս լինելը մոռացուում է: Չարիքը տեսնել դժուար է. նա խիստ աչքի ընկնող է, բայց ի՞նչ դարման կարելի է տանել: Այս նկատմամբ նա յաջող կերպով ծրագրի մէջ նոր առարկայ մտցրեց. 1891-ի դեկտեմբերին նա մի բարոյագիտութեան ձեռնարկ կազմեց (Livret de morale) և հրատարակեց, զրա մէջ 126 հարցմունք կայ պարզ ու խելացի պատասխաններով, այնպէս որ արժէ բերան խմանալ ոչ միայն քննութեան, այլ և ուրիշ առիթների համար: Բարոյագիտութիւն

նր ձեռնարկով ուսուցանելու մասին թէև տարակոյսներ եղան, սակայն փորձը ցոյց տուաւ, որ նրա զաղափարը արդիւնաւոր էր, ուստի և վերջերս նոյն ուղղութեամբ բազմաթիւ զրբեր երեւցան: Մոնպելիէի ձեռնարանի տեսուչ Ժերարը կատարելագործեց Վիպլիւյի եղանակը, նա կարճ և ազդու խրատներին կցեց կեանքից վերցրած այնպիսի օրինակներ, որոնցից իւրաքանչիւրը խիժան կարող է համարուել ամէն մի բարոյականութեան ձգտող անձի համար: Նրա զրբերից մէկի մէջ, որտեղ ուսուցումն ամբողջովին զրոյցներից ու անեկտողներից է բաղկացած, իւրաքանչիւր դասն առանձին վերնազիր ունի՝ մեծատառ տպուած, որ կենցաղական կանոն է և իւրաքանչիւրն էլ սկըսուում է «պէտք է»-ով. այս ձևն արդէն Սանտի հրատարականներն է յիշեցնում: Ա. դաս. «պէտք է ազնիւ մարդ լինել»: Բ. դաս. «պէտք է միշտ խղճմոռանքին ակամջ դնել» և ըն. Մատաղ աղջիկներին նուիրուած գրքի մէջ նոյն ձևն է պահպանուած, միայն այնտեղ հեղինակը՝ բարոյագիտի ու հմուտ մանկավարժի նուրբ հոտառութեամբ նոյն լեզուով չի խօսում: Ա. դասի վերնազիրն է. «Առաքինութիւնից աւելի գեղեցիկ քան չկայ», իսկ հատուածի մէջ ասուած է, որ մատաղ աղջկայ ու կնոջ ամենաբնորոք գարգն առաքինութիւնն է և ըն. Այսպէս ուրեմն ֆրանսիական մանկավարժութիւնն երկու տասնեակ տարի թափառելուց յետոյ կրկին դառնում է այն ուսուցման եղանակին, որ հին դպրոցն ունէր, մի զանազանութեամբ, որ վերացական հրամայականներով է կրթում, փոխանակ աստուածային պատգամների, երեւի այս է պատճառը, որ այդ դպրոցի աշակերտները չեն ընդունում իրենց աւանդուած հրամայականների անհրաքելի լինելը և նորանոր հրամայականներ են ստեղծում, որ «պէտք է հարուստ լինել», ուրեմն ի՞նչ վնաս եթէ Պանամայի ընկերութեան գրամներն ուտեն

Վիպլիւյին ոչլ կերպ հետեւողներ էլ ունեցաւ: Ֆրանսիական մի մանկավարժական ամսաթերթ 92 թ. վերջերը միջանակ նշանակեց

տարրական դպրոցի մանկանց բարոյականութեան վերաբերեալ կանոնների ժողովածուի համար և այդ բովանդակութեամբ 128 ձեռագիր ստացաւ: որոնցից 20 մրցանակի արժանացան:

Որքան խնամքով կազմուած լինին զրանք, որքան և յարմարեցրած դպրոցական պահանջներին, բայց և այնպէս զրանք չեն կարող տալ այն ինչ սպասել էլ չի կարելի, որովհետեւ զրանք դասադիրք չեն սովորական առմամբ, այլ յատկացած են՝ զարգացմամբ կամ տարիքով ընտրեալ աշակերտների համար:

Ազան և այլ առաջարկութիւններ, մի քանի տեսուչներ վերոյիշեալ միջոցների արժանաւորութիւնը չհերքելով՝ բարոյական դաստիարակութեան դիւրին ծանապարհը համարելցին այն եզանակը, որ ուսուցիչը դաստառում աշակերտաց հետ կը մշակէ: Այլ և այլ ցուցումներ եղան այս մասին, որոնց մէջ թէև օգտակար հրահանգներ շատ կան, սակայն զրանք ազատ չեն և բացառական կողմերից, որովհետեւ այդ մեծ գործին թեթեւ են վերաբերուել. միանգամայն սխալներից զերծ լինելու համար աւելի սպասով կը լինի հին ձևին դառնալը:

Այդ շարժումն արդէն 7 տարի է որ սկսուած է: Դեռ 88-ին Ֆրանսիական ամենայայնի մանկավարժ Գրէարը տեսչական շրջաբերականով հրաւիրում էր լուրջ ուշադրութիւն դարձնել դաստիարակութեան հետ բարոյակրթութիւնը միացնելու անհրաժեշտութեան վրայ, իսկ 93-ին ազգային բուսաւորութեան նախարարը տարրական կրթութեան վերատեսուչներին յանձնարարեց հետեւել զլիսաւորապէս բարոյական ու քաղաքացիական դաստիարակութեան դրութեան մասին և թէ ինչ միջոցներով զրանց թերութիւնները կարելի է ուղղել: Այս նկատմամբ յիշում ենք միայն Ֆ. Մարտէլ վերատեսչի հաղորդագրութեան մասին:

Սա չի մերժում ոչ զիբքն ու ոչ դաստիարակի անկախ աշխատութիւնը, սակայն երկիւղ է կրում, որ բարոյականութիւն ուսուցանելիս դաստիարակը ի չարը գործ գնէ

խիստ սակաւ կամ խիստ շատ զրբին դիմելով, որից ընդհանուր ուսուցումը կը փաստուի: Քանի որ ուսուցիչներին յաճախ կրկնուած է, որ նրանք որոշ դասադիրքի հետ չպիտի կապուին, որ իրանց խղճմտանքի ազդման համաձայն կարող են դաստառնդել, ուստի և շատ ուսուցիչներ այս խորհուրդը բառացի կերպով կարող են ըմբռնել և անպատրաստ դասի գնալ, որից միշտ պէտք է փախուստ տալ, որքան և դասը թեթեւ լինի:

Միւս կողմից հակառակ ծայրայեղութիւնն էլ երկիւղ է պատճառում: Միակ դիրքը բռնապետ է հանդիսանում, որքան գեղեցիկ ու ճաշակով կազմուած և նոյն իսկ գլուխ գործոց լինի, բայց և այնպէս դիրքը ամէն տեղ միակերպ չի գործադրուիլ, ուսուցիչը միջոց պէտք է ունենայ ազատ կարգաւորելու իր ձեռքում ունեցած նիւթը, մէկն աւելացնելու, միւսը յապաւելու, երրորդը կերպարանափոխելու, մի խօսքով նա կատարեալ տէր պէտք է լինի՝ ինչպէս իւր ստեղծագործութեանը: Աւելցնու ուսուցիչը չպէտք է ոգևորուի ու օգտուի ոչ միայն մի գրքից, այլ և այն ամէնից, որ նրան կարող են պէտք գալ, ուստի և ուսուցիչը իւր յուշատետրի մէջ նախօրօք պիտի նշանակէ իւրաքանչիւր դասի նախադիժը, աչքի տնցնէ որոշմունքները, ընտրէ օրինակները, պատրաստէ բովանդակութիւնը, կարգաւոր մասերը և գրուելիք հարցերը: Այս է ահա Մարտէլի մտքած նորութիւնը:

Ըստ ինքեան կարծես «երեսայոց հետ բարոյական խօսակցութիւնք» անելուց դիւրին բան չկայ, սակայն այստեղ պատահական խօսակցութեան մասին չէ խօսքը, այլ մի շարք զրուցատրութեանց, որ բարոյականութեան զանազան կողմերը պէտք է շօշափեն որոշ կարգով ու հետևողականութեամբ, որ անշուշտ երեխայի սրտի ու ուղեղի վրայ կը թողնէ որոշ հետք և պարզ ու ուղիղ խօսքերով արտայայտուած կենդանի զգացողութիւն, որ հարկ եղած ժամանակին դիւրութեամբ կը յիշէ: Այդ երբ միտ բերենք մի բոպէ այս բոլոր գծուարութիւնները, որ անբաժան են այգալիսի աշ-

խառութեան հետ այն ժամանակ երևան կը գայ այս դործի բոլոր ծանրութիւնը. իսկ թէ ի՞նչ չարիքներ կը յատաճանան այս ձեռք անհատական բարոյականութեան աւանդումներէն, զիւրին է զուշակել. եթէ փիլիսոփայութիւնն այսօր չունի մի ամէնից բնորոշուած բարոյագիտութեան սխալմամբ արդեօք ի՞նչ պիտի ուսուցանեն ժողովրդական գպրոցի ուսուցիչները բարոյագիտութեան անուան տակ:

Դ Լ Բ Ս Ի Մ .

Եյս անգամ ինձ առաջնորդ բռնելով Մօքսի պատմաբան Չարսանճագ գաւառացի Մինաս բարաբը, հարեանցի կերպով կը ներկայացնեմ Դէրսիմի տեղագրութիւնը, քիւրդ և հայ ժողովրդեան կենցաղավարութիւնը:

Դէրսիմի որ Բարձր Հայոց արեւմտեան մասն կը բռնէ, բարձր և կզղիացած գիրք ունի, երեք կողմից ջրեր պատած են, և յարեւելից Բիւրակեան լեռներու շղթան ընդհատած է:

Դէրսիմի հիւսիսային և հարաւային ստորոտներից յարեւմուտս կը հասնի Նփրատի երկու մեծ ծիւղերն և այդ երկրի վերջաւորութեան վերայ՝ Չմշկածագի խոնարհ իրար կը խառնուին:

Եյս երկու ծիւղերից Բարձանին որ Մշոյ գաւառից անցնելէն և Ճապաղ-Ջրի խառնուելէն յետոյ կը քերէ Դէրսիմի հարաւային ստորոտներն, Բալուայ-ջուր անուամբ անցնելով Բալուայ, Փերինայ, Բերգակի և Չմշկածագի սահմաններէն և զորս աջ թողլով կը խառնուի Սև ջրի, նաև այս ընթացքի մէջ ի ձախ կը թողու Խարրերգու գաւառն:

Դէրսիմի հիւսիսից կանցնի Սև ջուրն. այս ջուրն իւր ընթացքի մէջ աջ ափին վերայ կը թողու Մամսխաթուն (Դերջան), Երզնկայ, Կամախ և Զամարա. Դէրսիմի արեւմտից պատած է Սև ջրի շարունակութիւնը, որ Փնկեանէ խոնարհ ուղղուած է ի հարաւ-արեւելս մինչև Բալուայ ջրի խառնուրդն: Սև ջուր որ և այս ընթացքի մէջ Ակնայ ջուր կատարի, ձախ եղբին վերայ կը թողու Փնկեան, աջին վերայ Ակն և ձախին վերայ Չը մշկածագ:

Եյս երկու ջրերու միջավայրն բարձր գիրք մի բռնած է Դէրսիմի ունի ընդարձակ տարածութիւն որ կերկարի յարեւելից յարեւմուտս 5—6 աւուր ձանաղարհ, ըստ ամենայնի լեռնային և մեծ մասամբ անտառապատ:

Դէրսիմի հարաւային ստորոտներն, այն է Բալուայ ջրի աջ եղբին վերայ տարածուած են Բալուայ, Բերնայ, Բերգակի և Չմշկածագի գաւառներն, որք մեծ մասամբ հայ են, իսկ արեւմտեան ստորոտներն Փնկեան, Կամախ, Ակն և Չմշկածագի մէկ մասն բռնած են. սոքա ևս մեծ մասամբ հայ բնակիչներէ կը բաղկանան, մասնաւոր ինչ հայ-հոռոմներ:

Դէրսիմի շղթան ուղղակի յարեւելս Մնձուր, Տուժիկ, Ղզըլ-քիլիսէ, Ազքան, Հէյթան լեռներէ կաղմուելով՝ կը հասնի Բիւրակն:

Դէրսիմի միջէն երկու մեծ ջրեր ի հարաւ կը խոնարհին, մերձ Փերինայ իրար կը խառնուին, ապա Փերինայ ջուր անուամբ և Մուրատի մեծութիւնը առնելով Աւսեկու մօտ կը խառնուի Մուրատի:

Փերինայ ջուրն Բիւրակն լեռան արեւմտեան հիւսիսային կողերէն սկիզբ կառնէ, նախ յարեւմուտս հոսելով կը մտնէ Դէրսիմի, Դէրսիմի արեւելեան հարաւային կողերն քերելով՝ ի հարաւ արեւմուտս կը հոսի ցխառնուրդ Մուզուրայ. երկրորդն Մզուրայ կամ Մնձուրայ ջուրն, որ Դէրսիմի արեւմտեան ծայրէն կսկսի՝ նախ ի հարաւ արեւելս կը հոսի, ապա հարաւ կիջնայ ցխառնուրդ Փերինայ. այս ջուրն Փերինայ ջրի չափ մեծութիւն և երկարութիւն չունի, սակայն պտոյտ կրտայ բուն Դէրսիմի մէջ:

Դէրսիմի որդէս կերելի, հինգ կառավարչեան մասի կը բաժնուի երկրի բնական գիրքին համեմատ, որոց երեքին մէջ կը նստին գայմազամներ, իսկ միւս երկու մասն գեռ թուրք կառավարիչներու երես տեսած է:

Դէրսիմի լեռնային հինգ բաժանման մէջ վեր ի վերոյ կը հաշուեն 60,000 հրացան կրող քրդեր, ոմանք այս թիւը կը հաստատեն. ըստ իս 40,000 հրացան կրող քիւրդեր միշտ պատրաստ են. ամբողջ քիւրդ բնակչաց թիւը 100,000էն կանցնի:

Դէրսիմի լեռնային մասի մէջ կը գտնուին նաև քանի գիւղերու մէջ 350 տան չափ հայեր, որք քիւրդերու հետ շփուելով մեծ մասամբ մոռացած են իւրեանց մայրենի լեզուն, քիւրդերու նման կեանք վարելով քաջարար գիմաղրած են շատ անգամ թշնամոյն. այս հայերն Միւրակցի անուամբ կը կոչուին:

Աւթուռամեայ Մինաս իւր հօրից լսած է որ Դէրսիմի վերայ միշտ թուրքեր պատերազմ մղած են և ամէն ժամանակ յաղթուած՝ առանձին առանձին ժամանակներու մէջ լազեր, ենիշերիներ, առնաւուաներ ևլն. ձմեռած են Չարսանճագ հայերու մօտ, յարձակում գործած են Դէրսիմի վերան և յաղթուած: